Հայաստանի Հանրապետություն
Հայտերի ներկայացման հրավեր
Ազգային մրցութային սակարկություն
"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիր
փոխառություն. թիվ – 1673 P
"ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքում գործող ջրամատակարարման համակարգում ջրի ֆիլտրման կայանի կառուցում" IRFSP /CW/NCB-2019/002

1. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամից (ՄԶՕՀ) ստացել է փոխառություն "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիր ծախսերը հոգալու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել "ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքում գործող ջրամատակարարման համակարգում ջրի ֆիլտրման կայանի կառուցում" IRFSP /CW/NCB-2019/002 ծրագրով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

2. "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ ծրագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար:
Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 8 ամիս:

3. Մրցույթը կիրականացվի ՄԶՕՀ-ի Գնումների Ուղեցույցի համաձայն՝ Ազգային մրցութային սակարկություն եղանակով:

4. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:

5. Որակավորման չափանիշները ներառում են.

ա/ Վերջին երեք տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝

163,500,000.0 ՀՀ դրամ;

բ/ որպես գլխավոր կապալառու պետք է ունենա փորձառություն նմանատիպ բնույթի և բարդության 1 շինարարական աշխատանքի, վերջին հինգ տարիների ընթացքում;

գ/ շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝

13,600,000.0 ՀՀ դրամ;

6. Հայտատուների կողմից մրցութային փաթեթը հայերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում, գրավոր դիմում ներկայացնելու և 10,000.0 ՀՀ դրամի չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2020թ. փետրվարի 17-ը ժամը 15:00: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես փետրվարի 17-ին ժամը 15:00-ին, մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:

8. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով,
որի գումարը կազմում է՝ 1,100,000.0 ՀՀ դրամ;
Վերևում հիշատակվող հասցեն է.

"Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ
ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, Գնումների բաժնի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
հեռ. 37410 54 65 10 138; Ֆաքս: 37410 58 80 58; Էլ.փոստ: procurement@raed.am;
Ամերիա Բանկ ՓԲԸ, h/h 15700 – 11483010200.